

դիսապէս կը բազմին ազնուականաց հետ
 կուշտ կշտի: Կանխենք ըսել՝ թէ դժուա-
 րին է ազոցմէ տարբեր պատուոյ արժա-
 նացնել վարձակներն իսկ, որոնք չէին կըր-
 նար պարկեշտութեան օրինակներ հանդի-
 սանալ սոյնպիսի համախմբութեանց մէջ՝
 ուսկից բացակայ տեսանք կանանց սեռը
 (աստ, 141): Հաւանօրէն ասոնց արուեստն
 երկդիմի էր, որով դիւրաւ կը մեկնուի
 կոչնականաց չափազանց համարձակու-
 թիւնն ալ անոնց հետ, ինչպէս պիտի տես-
 նենք ի ստորեւ: Բայց կային նաեւ ա-
 ղոցմէ տարբեր եւ ընկած կանայք, զորս
 յաճախ այդ եւ միւս ծաղկանց հետ միա-
 սին հաւաքուած կը գտնենք: Այսպէս՝ Ս.
 Յուսկան անարժան որդիքն «ըմպէին զի-
 նի, կ'ըսէ պատմիչը, բոզօք եւ վարձակօք
 եւ գոռսանօք եւ կատակօք» (Փաւս. 48). փոյթ
 չէ թէ այնպիսի հօր մը զաւակներ, թա-
 զաւորի քեռայրներ, ու սարկաւազութեան
 սուրբ աստիճանին բարձրացած մարդիկ
 լինէին, եւ գտնուէին Հայոց վեհագոյն
 սրբավայրի հայրապետանոցին մէջ: Պատ
 եւ Աթանազիւնէս՝ ոչ առաջին եւ ոչ միակն
 էին այդ վատթար դասուն մտերմութեան
 մէջ: Արդէն իրենց հետ կային հոն «եւ այլ
 մարդիկ... տաճարակիցք՝» վարժած նոյն
 կենցաղավարութեան: Բաց աստի՝ Ոսկե-